

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 195

Սրբագործութիւնը ազդում է ամբողջ մարդուն – Աստծոյ սրբագործութեան գործը ազդում է ամբողջ մարդուն՝ ազդելով մարդու մարմինն ու հոգին: Մարմինը մարդու ֆիզիքական ու շօշափելի մասն է. եւ հոգին մարդու ոչ ֆիզիքական ու անշօշափելի մասն է՝ բաղկացած բանականութիւնից, կամքից, խղճից, ու զգացումներից:

Աստուծաշունչը ուսուցանում է մարդու հոգու բոլոր առումները ազդում են սրբագործութիւնից: Սրբագործութեան միջոցով մի հաւատացեալի հոգեւոր գիտութիւնն ու հասկացողութիւնը աստիճանաբար նորոգում եւ աճում են (Յովհաննէս 6:45, 14:26, 16:13, Հռովմայեցիս 12:2, Փիլիպպեցիս 1:9, Կողոսացիս 1:10, 3:9-10): Սրբագործութիւնը նաեւ ազդում է հաւատացեալի կամքը՝ այսինքն նրա որոշումներ կայացման գործութիւնը (Եզեկիէլ 36:25-27, Փիլիպպեցիս 2:12-13): Աստուծ գորացնում եւ մղում է թէ մեր ցանկութիւնները եւ թէ մեր արարքները, ապրելու Քրիստոնէական կեանքը Իր բարեհաճութեան համար ու համաձայն: Առաւել, մինչ մեր մտքերն ու կամքերը Աստծուց նորոգում են, մեր խղճերը նաեւ պատշաճօրէն տեղեկացւում եւ ամրապնդում են, դատելով մեր մտքերն ու արարքները աստուծաշնչայինօրէն (Ա. Տիմոթէոս 1:18-19, Եբրայեցիս 9:14): Սրբագործութիւնը նաեւ ազդում է հաւատացեալի զգացումները: Մինչ Հոգին գորացնում է մեզ որպէսզի շարունակաբար հանել հին մարդը եւ հագնել նոր մարդը, սուրբ ապրուստի պտուղը աճողաբար երեւան է գալիս մեր կեանքում (Գաղատացիս 5:22-25): Այս ներառում է մեր կեցածքների ու զգացումների յառաջադիմական վերափոխումը, ուր մենք աւելի ու աւելի ցանկանում եւ սիրում ենք այդ ինչ որ պատում է Աստծուն (Մաղնոս 37:4, Կողոսացիս 3:8, 12-15, Ա. Կորնթացիս 13:4-7):

Սրբագործութիւնը նաեւ ազդում է հաւատացեալի ֆիզիքական մարմինը: Թէպէտ մեր մարմինները օրէցօր տկարանում են, նազում ու փճանում են, եւ մեր ընկած բնութիւնից օգտագործում են որպէսզի մեղք յառաջացնել (Ա. Կորնթացիս 15:53, Բ. Կորնթացիս 4:16), սակայն Աստուծաշունչը նաեւ ուսուցանում է որ Հոգու գործութեամբ մենք կարող ենք եւ կոչւած ենք գործածելու մեր մարմինները որպէսզի արտացոլենք Աստծոյ սրբութիւնը մեր խօսքերով ու արարքներով: Ու թէկուզ մեր մարմինները աւելի ու աւելի թուլանում են, բայց եւ այնպէս դրանք Աստծուց գործածում են ցուցադրելու Իր գործութիւնն ու փառքը (Հռովմայեցիս 6:12-13, Ա. Կորնթացիս 6:19-20, 9:27, Բ. Կորնթացիս 4:7, 11:30, 12:9, Փիլիպպեցիս 1:20): Հետեւաբար, հարկ է մեզ հոգ տանել մեր մարմիններին, գիտակցելով որ դրանք գործիքներ կամ միջոցներ են որով մենք կոչւած ենք հնազանդելու Աստծուն եւ ծառայելու Նրան մեր կեանքերումը: Ուստի պարզ է որ թէ մեր մարմինը եւ թէ մեր հոգին սրբելու ընթացումն են (Բ. Կորնթացիս 7:1, Ա. Թեսաղոնիկեցիս 5:23):

Սրբագործութիւնը չի լինի ամբողջական այս կեանքում – Վերածնւած Հոգուց, հաւատացեալը այլեւս մեղքի ստրուկը չի այլ դարձել է Աստծոյ ստրուկը՝ մեռած մեղքին եւ կենդանի ուղղարարութեան (Հռովմայեցիս 6:11, 22, Ա. Պետրոս 2:24): Այս նշանակում է որ այդ իշխանութիւնը, գործութիւնն ու տիրապետութիւնը որ մեղքը ունէր մեր վրայ կտորւել են: Բայց եւ այնպէս, մենք ազատ չենք մեղքից քանի որ մեր մեղաւոր բնութեան մնացորդը դեռ մեր մէջ է, որը հակառակում է Աստծուն եւ պատերազմ է մղում մեր հոգեւոր բնութեան ու Աստծոյ բաների դէմ (Գաղատացիս 5:16-17): Ուստի, սովորական Քրիստոնէական կեանքը մի սրբութեան աճման կեանք է, բայց նաեւ մեղքի դէմ շարունակական պայքարի մի կեանք է՝ իր յաջողութիւններով ու ձախողումներով (Հռովմայեցիս 6:12-13, 7:14-25, Ուէստիմնատրը Հաւատոյ Հանգանակ 13.2):

Սրբութեան մէջ աճման ու մեղքի դէմ պայքարի չափը (կամ աստիճանը) կ'տարբերւի Քրիստոնէայից Քրիստոնէայ՝ կախեալ բազմաթիւ պատճառներից, ինչպէս Աստծուց մատակարարած սրբագործութեան միջոցների պատշաճ օգտագործումը: Կ'լինեն մեծ աճման ժամանակներ բայց նաեւ դանդաղ կամ ոչ աճման ժամանակներ, կամ նոյնիսկ յետադարձութեան կամ խտտորման ժամանակներ: Բայց ժամանակի ընթացքում երբ մենք ետ նայենք կ'տեսնենք մեր սրբութեան մէջ մի ընդհանուր դրական աճման գիծ:

Թէպէտ մեղքի ապականութիւնը աստիճանաբար մաքրում եւ վերացւում է մեզանից, սակայն մեր սրբագործութիւնը չի լինի ամբողջական ու կատարեալ այս կեանքում՝ քանի որ մեղքն ու մեղքի դէմ պատերազմը միշտ ներկայ կ'լինեն այս կեանքում (Ժողովող 7:20, Փիլիպպեցիս 3:12-14, Ա. Յովհաննէս 1:8): Բայց եւ այնպէս, Սուրբ Հոգու գործութեամբ ու ներգործութեամբ մեր վերջնական յաղթանակը երաշխաւորւած է, որը միայն կ'գայ մեր մահուան երբ մենք լիովին կ'ազատենք ոչ միայն մեղքի ապականութիւնից այլեւ դրա ներկայութիւնից (Ուէստիմնատրը Հաւատոյ Հանգանակ 13.3): Մեր հոգիների վերաբերեալ մեր սրբագործութիւնը կ'կատարելագործի մահուան, երբ մենք կ'մտնենք մեր Տիրոջ ներկայութիւնը (Բ. Կորնթացիս 5:8), կ'միանանք կատարելութեան հասած արդարների հոգիներին (Եբրայեցիս 12:23), եւ կ'գտնենք յաւերժական հանգիստ մեր աշխատանքներից ու պայքարներից (Յայտնութիւն 14:13): Իսկ մեր մարմինների վերաբերեալ մեր սրբագործութիւնը կ'կատարելագործի մեր Տիրոջ վերադարձին, երբ մեր ֆիզիքական մարմինները յարութիւն կ'առնեն՝ անապականելի ու անմահական (Ա. Կորնթացիս 15:48-57, Փիլիպպեցիս 3:20-21): Միմիայն այն ժամանակ է որ մեր սրբագործութիւնը ամբողջովին կ'իրագործի՝ երբ մենք կատարելապէս կ'կրենք երկնքի Մարդու պատկերը՝ մարմնով եւ հոգով, ինչպէս որ սկզբից ստեղծուել էինք անելու: